ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

28 հոկտեմբերի 2026թ. թիվ 1232

Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ, Է.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻՆ, Գ.ՂԵՎՈՆԴՅԱՆԻՆ ԵՎ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2026 թվականի օգոստոսի 19-ի թիվ /44.2/28439-2026 գրությունը և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2026 թվականի օգոստոսի 31-ի թիվ 05//07451-2026 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ն ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Վահրամ Ղարսայանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Էդգար Հախվերդյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Ալբերտ Դանիելյանին և առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Գոհար Ղևոնդյանին 2026 թվականի նոյեմբերի 10-ից 12-ը ներառյալ՝ երեք օրով գործուղել ՀՀ պետական կառավարման ակադեմիա՝ «Կառավարում արտակարգ իրավիճակում» թեմայով վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Աիդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

3. Վ.Ղարսայանի բացակայության ընթացքում նրան փոխարինող նշանակել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Լևոն Հախինյանին, իսկ Է.Հախվերդյանի բացակայության ընթացքում նրան փոխարինող նշանակել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Ստեփանյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

10/28/2026

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: DALLAKYAN MERI 5303860493 Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր